

**Հայտարարություն**  
**անտառային հողերը վարձակալության հանձնելու նպատակով**  
**մրցույթ անցկացնելու մասին**

**Անտառօգտագործման տեսակը, ժամկետը, վայրը.**

«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ստեփանավանի» անտառտնտեսության մասնաճյուղի անտառային տարածքից 0,5 հա տարածքը 10 տարի ժամկետով հանգստի և զբոսաշրջության նպատակներով վարձակալության իրավունքով տրամադրելու համար: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

**Մրցույթի կազմակերպչի անվանումը, մրցույթի կազմակերպման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, վայրը (հասցեն).**

Մրցույթը կազմակերպում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, 2018 թ. փետրվարի 14-ին: Մրցույթի անցկացման վայրն է՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն,

**Մրցույթին մասնակցության հայտերի ընդունման ժամկետը (ժամերն ըստ օրերի).**

Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են 2018 թվականի հունվարի 8-ից մինչև 2018 թվականի փետրվարի 8-ը (աշխատանքային օրերին ժամը 10<sup>00</sup>-ից 16<sup>00</sup>):

**Վարձավճարի չափը.**

Վարձավճարի չափը տարեկան կազմում է 196.000 դրամ:

**Մրցույթին մասնակցության նախավճարի չափը**

Մրցույթին մասնակցության նախավճարի չափը կազմում է 9800 ՀՀ դրամ:

**Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարը.**

Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարն է՝ 163038001166

**Մասնակիցների կողմից անտառի տարածքին ծանոթանալու օրերը և ժամերը.**

Մրցույթի մասնակիցները կարող են տարածքին ծանոթանալ 2018 թվականի հունվարի 16-ին և 23-ին՝ ժամը 10<sup>00</sup>-ին:

### **Մրցույթին մասնակցության հայտին կից պահանջվող փաստաթղթերի ցանկը.**

Մրցույթին մասնակցության հայտին կից ներկայացվում են՝

- 1) իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար՝ համապատասխանաբար պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.
- 2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը.
- 3) առաջարկը.
- 4) հայտատուի կողմից տրված լիազորագիրը, եթե մրցույթին ներկայանում է նրա լիազորած անձը:

### **Մրցույթի պայմանները, մրցույթի հաղթողին որոշելու կարգը.**

Հանձնաժողովի անդամները մրցույթին մասնակցող հայտատուների կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագիրը գնահատում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N806-Ն որոշման՝ 1-10 բալանոց միավորների համակարգով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի ներկայացրած հայտի գնահատված միավորների հանրագումարն առավելագույնն է մնացած մասնակիցների միավորների հանրագումարից, բայց ոչ պակաս հանձնաժողովի անդամների կողմից գնահատվելիք առավելագույն միավորների հանրագումարի կեսից:

Հավասար միավորների դեպքում հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

### **Մրցույթի հայտերը ներկայացնելու վայրը.**

Մրցույթի հայտերը ներկայացվում են ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, կառավարական տուն 3, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

### **Հայտերի բացման և դրանց ամփոփման նիստերի կայացման օրը և ժամը.**

Հայտերը բացվելու և ամփոփվելու են 2018 թվականի փետրվարի 14-ին ժամը՝ 11<sup>00</sup>-ին:

**ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**